

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2021 թվականի N 458-Լ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածը, ինչպես նաև պետական գույքի կառավարման ոլորտում նոր, բարեփոխված քաղաքականություն իրականացնելու նպատակը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել պետական գույքի կառավարման 2021-2023 թվականների ծրագիրը՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով հաստատված՝ պետական գույքի կառավարման 2021-2023 թվականների ծրագրով նախատեսված միջոցառումների կատարումն ապահովվում է պետական կառավարման մարմինների կողմից, իրենց լիազորությունների շրջանակում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Երևան

Ն. Փաշինյան

01.04.2021
ՀԱՎԱՍՏԱԿԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պետական գույքի կառավարման 2021-2023 թվականների ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) մշակվում է ծրագրի գործողության ժամանակահատվածում պետական գույքի առանձին տեսակների համար իրականացվելիք միջոցառումների և գործարքների, զարգացման առաջնահերթությունների ու սահմանափակումների նկարագրությունը սահմանելու նպատակով՝ ապահովելով այս ոլորտում քաղաքականության միասնականությունը, շարունակականությունը և բարեփոխումների հետևողական իրականացումը:

2. Ծրագիրը գործում է 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում: Յուրաքանչյուր տարի, մինչև տվյալ տարվա մարտի 15-ը, ծրագրում անհրաժեշտության դեպքում համապատասխան վերադաս պետական մարմինների հիմնավորված առաջարկությունների դեպքում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ՝ ընթացիկ և հաջորդ տարվա համար նախատեսված միջոցառումների և գործարքների նոր նկարագրությունը սահմանելու և փոփոխելու համար:

3. Ծրագրում լրացումներ և փոփոխություններ կարող են կատարվել միայն կառավարության, պետական մարմինների ղեկավարների, մարզպետների կողմից պետական գույքի և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կտրվածքով սահմանված միջոցառումներում քանակական ցուցանիշների էական փոփոխություն կատարելու և ծրագրում նոր միջոցառումների ընդգրկման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու դեպքում:

II. ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Սույն ծրագրի գործողությունը տարածվում է՝

1) պետական մարմիններին և մարզպետարաններին ամրացված գույքի վրա.
2) պետական ոչ առևտրային կազմակերպություններին, հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով և վարձակալությամբ տրամադրված անշարժ գույքի վրա.

3) իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետությանը պատկանող բաժնետոմսերի (բաժնեմասերի) վրա.

4) պետությանը պատկանող գույքային իրավունքների (բացառությամբ պետությանը պատկանող պահանջի իրավունքի) վրա.

5) դատական ակտով պետության սեփականության իրավունքը ճանաչված գույքի վրա:

5. Սույն ծրագրի գործողությունը չի տարածվում՝

1) պետական սեփականություն հանդիսացող հողամասերի (բացառությամբ շենք, շինություններով զբաղեցված և դրա սպասարկման համար հատկացված հողամասերի), ընդերքի, անտառների, մեկուսի ջրային օբյեկտների և պետությանը պատկանող այլ բնական պաշարների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, ինչպես նաև կենտրոնական բանկի գույքի և կենտրոնական բանկի կողմից հիմնադրված կամ կենտրոնական բանկի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների վրա.

2) պաշտպանական, սահմանային, քաղաքացիական պաշտպանության, ինչպես նաև ազգային անվտանգության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի տիրապետմանը և օգտագործմանը հանձնված կամ հանձնման ենթակա պետական գույքի վրա, որն իր նշանակությամբ նախատեսված է գաղտնի աշխատանքների կատարման համար.

3) «Սեփականության իրավունքից հրաժարում` հօգուտ պետության» մաքսային ռեժիմով պետությանը սեփականության իրավունքով հանձնված գույքի վրա.

4) կոնցեսիոն և հավատարմագրային կառավարմանը հանձնված, ինչպես նաև հանրային հեռարձակող ընկերությունների վրա:

6. Առևտրային կազմակերպություններում մինչև 50 տոկոս բաժնետոմսերը (բաժնեմասերը) պետական սեփականություն հանդիսանալու դեպքում այդպիսի կազմակերպություններում իրականացվող միջոցառումների վերաբերյալ որոշումներն ընդունվում են իրենց զարգացման հեռանկարային ծրագրերի համաձայն` «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքին համապատասխան:

7. Ծրագրի նպատակներն են`

1) պետական գույքի կառավարման բնագավառում միասնական քաղաքականության մշակումը և իրականացումը.

2) պետական գույքի կառավարման (այդ թվում` մասնավորեցման, օտարման, լուծարման, օգտագործման, սպասարկման) արդյունավետության շարունակական բարձրացումը.

3) պետական գույքի մասնավորեցման, օտարման և օգտագործման տրամադրման և պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման շնորհիվ ՀՀ պետական և համայնքային բյուջեների եկամուտների ավելացումը և գույքի հանրային օգտակարության բարձրացումը.

4) պետական գույքի պարբերական գույքագրումը և ամբողջական հաշվառման իրականացումը, հաշվառման պետական սեփականություն հանդիսացող գույքի տվյալների թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

5) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման արդյունավետության բարձրացման շնորհիվ դրանց գործունեության ֆինանսատնտեսական ցուցանիշների բարելավումը և շահույթի ծավալի ավելացումը.

6) պետական գույքի կառավարման ոլորտում պետություն-մասնավոր հատված փոխշահավետ գործընկերության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և համագործակցության նոր ձևաչափի ներդրումը.

7) պետական գույքային հարաբերությունների կանոնակարգումը և շարունակական բարեփոխումը.

8) հանրությանը պետական գույքի կառավարման գործընթացին մասնակից դարձնելը.

9) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման միասնական և արդյունավետ համակարգի ձևավորումը.

10) պետական ոչ առևտրային կազմակերպությունների և պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների լուծարման գործընթացի արդյունավետ իրականացումը.

11) պետական գույքի արդյունավետ օգտագործման ճանապարհով տնտեսության իրական հատվածում ներդրումների ներգրավման ապահովումը:

8. Ծրագրով սահմանված նպատակների իրագործման համար պետք է լուծվեն հետևյալ խնդիրները`

1) պետական գույքի մասնավորեցման, օտարման և օգտագործման տրամադրման յուրաքանչյուր խոշոր միջոցառման ծրագրային կառավարման իրականացումը.

2) պետական գույքի մասնավորեցման, օտարման, երկարաժամկետ և կարճաժամկետ վարձակալության գործընթացում արդիական գործիքակազմի կիրառումը, անհատույց օգտագործման տրամադրման ընթացակարգերի պարզեցումը, հավասար պայմանների սահմանումը, վարչարարության կրճատումը, գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

3) պետական գույքի գրավչությունը և վաճառքի խթանումն ապահովելու համար պետական գույքի մասնավորեցման և օտարման գործընթացում առավել գործուն և արդյունավետ գործիքակազմի կիրառումը.

4) չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող պետական գույքը տնտեսական շրջանառության մեջ դնելու աշխատանքների իրականացումը.

5) պետության գործառույթների համար անհրաժեշտ պետական գույքի կազմի և ճիշտ (նախընտրելի) կառուցվածքի սահմանումը.

6) պետական գույքի հաշվառման բնագավառում արդիական միջոցների ներդրումը և հանրությանը հաշվառման տվյալները հասանելի դարձնելը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված բնութագրիչների և տեղեկատվության հիման վրա պետական անշարժ գույքի օգտագործման վիճակի վերաբերյալ ֆինանսատնտեսական մոնիթորինգի իրականացումը և անշարժ գույքի օգտագործման նկատմամբ գործուն վերահսկողական համակարգի ներդրումը.

7) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման բնագավառում արդյունավետ գործիքակազմի կիրառումը՝ կոնցեսիոն և հավատարմագրային կառավարման հանձնելու ճանապարհով.

8) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով, այդ կազմակերպությունների գործունեության արդյունքներից ելնելով, պատասխանատվության և կատարված աշխատանքի խրախուսման բնագավառում նոր գործիքակազմի ներդրումը.

9) պետական գույքի մասնավորեցման բնագավառում առավել արդյունավետ մասնավորեցման ձևերի կիրառում, մասնավորապես, ֆոնդային բորսայի միջոցով պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի վաճառքի կազմակերպում.

10) պետական ծախսերի կրճատման և հանրությանը մատուցված ծառայությունների մատուցման որակի բարելավման համար պետական գույքի կառավարման մի շարք լիազորությունների պատվիրակման հնարավորություններն ուսումնասիրելը և առաջարկություններ ներկայացնելը.

11) պետական գույքի տարանջատում՝ ըստ հետևյալ կառուցվածքային խմբերի՝

ա. պետական մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գույք (այսուհետ՝ պետական առաջնահերթ կարիքների բավարարման համար անհրաժեշտ գույք), որի միջոցով իրագործվում են պետության ռազմավարական, սահմանադրական և օրենսդրական գործառույթները,

բ. ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակ հետապնդող գույք, որի միջոցով ուղղակիորեն պետության կողմից լուծվում են տնտեսական աճի որոշակի խնդիրներ:

9. Սույն ծրագրի իրականացման հիմքում դրված են պետական գույքի կառավարման հետևյալ սկզբունքները՝

1) պետական գույքի՝ կառավարման յուրաքանչյուր օբյեկտի (օբյեկտների խմբի) ծրագրային ժամանակահատվածի համար կառավարման նպատակի (նպատակների) սահմանում և ամրագրում.

2) կառավարման արդյունավետության շարունակական ապահովում, որը պարտադիր է պետական մարմինների և կազմակերպությունների գործունեության գնահատման ժամանակ.

3) պետական գույքի կառավարման տարբեր մակարդակներում կառավարիչների, գործադիր տնօրենների աշխատանքների գնահատման համակարգի հստակ սահմանում.

4) կառավարման ոլորտում մասնակիցների շահերի ներդաշնակության ապահովում.

5) պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով առևտրային կազմակերպություններում միջազգային լավագույն փորձի վրա հիմնված կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառման ուղղությամբ նոր գործիքակազմի ներդրում.

6) պետական-մասնավոր համագործակցության պարզեցված պայմանների ներդրում:

10. Պետական գույքի կառավարման ընդհանուր գերակայություններն են՝

1) գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման ապահովումը.

2) գույքի որակական հատկանիշների պահպանումը.

3) պետական կարիքների բավարարման համար անհրաժեշտ գույքի գերակայությունը, ընդ որում, եթե միևնույն գույքը կարող է ունենալ նաև շահույթ ստանալու հնարավորություն, այնուամենայնիվ, այն դասվում է պետական կարիքները բավարարող գույքի խմբին.

4) պետական կարիքները բավարարող գույքը հիմնականում ենթակա չէ մասնավորեցման.

5) պետական գույքի նշանակությունը ենթակա է պարբերական վերանայման (օրինակ՝ յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ).

6) պետական գույքի համալրման նախապատվելի եղանակը պետական գնումներն են, այդ թվում՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում գույքի ձեռքբերումը՝ նախնական համարժեք փոխանակությամբ:

11. Պետական գույքի կառավարման գերակայություններն են՝ կախված գույքի նշանակությունից՝

1) պետական կարիքների բավարարման նպատակով սահմանված գույքի կառավարման համար՝

ա. պետության սահմանադրական և օրենսդրական գործառույթների, ռազմավարական նշանակության և վարչական նպատակների կատարման համար անհրաժեշտ գույքի նկատմամբ հիմնական պահանջներին նրանց լիակատար համապատասխանությունը,

բ. այս պահանջները բավարարող տարբերակներից առավել մատչելի և ռեսուրսախնայողի ընտրությունը.

2) շահույթ ստանալու նպատակ հետապնդող պետական գույքի կառավարման համար օգտագործման այլընտրանքային տարբերակներից նախապատվությունը տրվում է այն տարբերակներին, որոնք առավել նպաստում են տնտեսական աճի ապահովմանը, մասնավոր հատվածում օտարերկրյա և ներքին ներդրումների ներգրավմանը, շուկայական մրցակցության խթանմանը, արտահանման խթանմանը, աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրագործմանը, պետական բյուջեի եկամուտների ավելացմանը, մարդկային կապիտալի զարգացմանը, պետության այլ գործառույթների կատարմանը:

IV. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

12. Պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների կառավարման համակարգի կատարելագործման, դրանց կողմից պետական գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է հստակեցնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների գույքի կազմն ու կառուցվածքը և, միաժամանակ, օպտիմալացնել այդ կազմակերպությունների քանակը, ինչի հետ կապված իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) մասնավորեցնել՝

ա. պետական մասնակցությամբ այն առևտրային կազմակերպությունները, որոնց կողմից իրականացվող գործառույթները ոչ պետական առևտրային կազմակերպություններն իրականացնում են ավելի արդյունավետ և այդ ոլորտները կարիք ունեն զգալի ներդրումների,

բ. պետական մասնակցությամբ այն առևտրային կազմակերպությունները, որոնք վերջին 3 տարվա ընթացքում անընդհատ աշխատել են վնասով և թույլ են տվել կուտակված վնասի ծավալի ավելացում և ունեն ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում զարգացման հեռանկար.

2) լուծարել՝

ա. մասնավորեցման ծրագրում չընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունները՝ համաձայն N 2 հավելվածի N 1 ցանկի,

բ. ներկայացնել լուծարման այն առևտրային կազմակերպությունները, որոնք վերջին 3 տարվա ընթացքում անընդհատ աշխատել են աճող վնասով, թույլ են տվել կուտակված վնասի ծավալի ավելացում և չունեն զարգացման հեռանկար.

3) վերակազմակերպել 100 տոկոս պետական սեփականության բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունները, այդ թվում՝ ոչ առևտրային կազմակերպությունները՝ համաձայն N 2 հավելվածի N 2 ցանկի.

4) կոնցեսիոն և հավատարմագրային կառավարմանը հանձնել պետական գույքի և տարեկան կտրվածքով վնասով կամ ցածր շահութաբերությամբ աշխատող 50 և ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների բաժնետոմսերով հավաստված իրավունքները.

5) սահմանել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունների գործունեությունը գնահատող հիմնական ֆինանսատնտեսական և ոչ ֆինանսատնտեսական նոր նպատակային տեսանկյունից կիրառելի ցուցանիշները և այդ ցուցանիշների համաձայն կազմել կազմակերպությունների հեռանկարային զարգացման ծրագրերը և այդ ցուցանիշների ծրագրավորված աճը՝

ա. յուրաքանչյուր պետական մարմին «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքով վերապահված իր գործառույթների շրջանակում պետք է հսկողություն սահմանի իր համակարգում գործող կազմակերպությունների համար հաստատված գործարար ծրագրերի կատարման ընթացքի նկատմամբ, իսկ լիազոր մարմինը՝ մոնիթորինգի համակարգի միջոցով պետք է ամփոփի կազմակերպությունների հեռանկարային զարգացման ծրագրերի կատարման արդյունքները և առաջարկություններ ներկայացնի տեղ գտած թերությունների և բացթողումների վերացման ուղղությամբ,

բ. իրականացնել առևտրային կազմակերպությունների ժամկետանց կրեդիտորական պարտավորությունների մոնիթորինգը, պարտավորությունների առաջացման գործոնների վերլուծությունը,

գ. մշակել և իրականացնել կուտակված վնասի շարունակաբար նվազեցում ապահովող և ցածր շահութաբերությամբ աշխատող առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական առողջացման և

շահութաբերության մակարդակի պարբերական բարձրացումն ապահովող զարգացման ծրագրեր, այդ թվում՝ վնասով աշխատող կազմակերպությունների համար հաստատել ֆինանսական ուղղության կոնկրետ միջոցառումների երկամյա ժամանակացույց.

6) վերադաս կառավարման մարմինների նախաձեռնությամբ իրենց ենթակայության առևտրային կազմակերպություններում ներդրումային ծրագրի մշակման և ներդրման համար համապատասխան աշխատանքների իրականացում՝ անհրաժեշտ է ներդնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման արդիական, փորձարկված և լավագույն մեթոդներն ու ձևերը, մասնավորապես՝

ա. սահմանել պետական գույքի կառավարման գործընթացում ընդգրկված անձանց (գործադիրի, տնօրենների, կառավարիչների, պետության լիազոր ներկայացուցիչների) աշխատանքի պատասխանատվություն սահմանող և խրախուսման ենթարկող այնպիսի ձևեր ու մեխանիզմներ, որոնք կախված կլինեն նրանց գործունեության վերջնական արդյունքներից.

7) ստեղծել պետական գույքի կառավարման գործընթացում ընդգրկված անձանց որակավորման բարձրացման և ատեստավորման արդյունավետ համակարգ՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից անհրաժեշտ է, մասնավորապես՝

ա. բարեփոխել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կողմից գույքի (անշարժ և շարժական) օգտագործման արդյունավետության ցուցանիշների համակարգը՝ այն դարձնելով չափելի, հստակ և համեմատելի,

բ. իրականացնել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կողմից գույքի (անշարժ և շարժական) օգտագործման արդյունավետության պարբերական ուսումնասիրություններ.

8) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հաշվեկշիռներում հաշվառվող, կազմակերպությունների բնականոն գործունեության համար ոչ անհրաժեշտ գույքն օրենսդրությամբ սահմանված կարգով առանձնացնել կազմակերպությունների կազմից և հանձնել լիազոր մարմնի տնօրինությանը, ինչի արդյունքում առևտրային կազմակերպությունների ակտիվների նվազումը կհանգեցնի դրանց՝ ըստ ակտիվների շահութաբերության մակարդակի բարձրացմանը, և պետությանը հանձնված գույքը կտնօրինվի ավելի արդյունավետ և նպատակային՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեությունը կազմակերպել վերադաս պետական կառավարման մարմնի կողմից փորձաքննություն անցած և հաստատված հեռանկարային զարգացման ծրագրի հիման վրա, մասնավորապես՝

ա. կազմակերպություններում քննարկել և հաստատել սահմանված օրինակելի ձևին համապատասխան ոչ թե ձևական, այլ իրատեսական գործարար ծրագրեր.

9) 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում ներդնել գործունեության արդյունավետության որոշման և տնօրենների աշխատանքը գնահատող գործուն համակարգ՝ արդյունավետության որոշման և աշխատանքի գնահատման հիմնական չափանիշ սահմանելով ըստ ակտիվների շահութաբերության ցուցանիշը: Ընդ որում, շահութաբերության ցուցանիշի գնահատման համար անհրաժեշտ է սահմանել բոլոր կազմակերպությունների համար շահութաբերության ցուցանիշի նվազագույն սահմանային շեմ և ըստ ոլորտների նաև ճյուղային շահութաբերության նվազագույն շեմ: Շահութաբերության նվազագույն սահմանային շեմն առաջարկվում է ընդունել ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման վերջին երեք տարիների միջին դրույթաչափը: Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեությունը խթանելու և շահութաբերության մակարդակը

բարձրացնելու նպատակով առաջարկվում է կիրառել խթանող հետևյալ համակարգը՝

ա. շահութաբերության ճյուղային և ընդհանուր նվազագույն շեմը գերազանցելու դեպքում ձեռք բերված զուտ շահույթի ավելի մեծ մասը թողնել կազմակերպությանը՝ զուտ շահույթի բաշխման պրոգրեսիվ սանդղակին համապատասխան (ներկայումս գործող կարգի համաձայն 50 տոկոս և ավելի մասնակցությամբ կազմակերպություններում զուտ շահույթի 50 տոկոսը մտնում է կազմակերպությանը, իսկ մնացած 50 տոկոսը փոխանցվում է ՀՀ պետական բյուջե, որպես պետական մասնակցության դիմաց շահութաբաժին),

բ. եթե կազմակերպության շահութաբերության մակարդակը գերազանցում է ճյուղային սահմանային շեմը, ապա այս դեպքում շահութաբերության ճյուղային սահմանային շեմին համապատասխանող գումարը բաշխվում է 50 : 50 համամասնությամբ՝ պետության և կազմակերպության միջև սահմանային շեմը գերազանցող գումարը կարող է բաշխվել 75 : 25 հարաբերակցությամբ՝ հոգուտ կազմակերպությանը,

գ. եթե կազմակերպության շահութաբերության մակարդակը գերազանցում է ընդհանուրի համար սահմանված նվազագույն շեմը, ապա գերազանցող գումարի 90%-ը թողնվում է կազմակերպությանը: Առաջարկվող միջոցառումների իրականացման համար լրացուցիչ ֆինանսավորման միջոցներ չեն պահանջվում և դրանց մեծ մասը կարելի է իրականացնել լիազոր մարմնի և վերադաս կառավարման մարմինների գործառույթների շրջանակներում և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում ձևավորվող ֆինանսական միջոցների հաշվին:

13. Պետական գույքի առանձին օբյեկտների օգտագործման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) տնօրինությանը հանձնել չօգտագործվող կամ ըստ նպատակային նշանակության չօգտագործվող կամ մասնակիորեն օգտագործվող պետական գույքը՝ համաձայն N 2 հավելվածի N 3 ցանկի.

2) պետական մարմինների և մարզպետարանների ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը (որոնք ունեն անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում) կոմիտեի տնօրինությանը հանձնել համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 25-ի N 1079-Ն որոշման N 1 հավելվածի.

3) պետական մարմինների և մարզպետարանների ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը (որոնք չունեն անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում) կոմիտեի տնօրինությանը հանձնել գրանցման աշխատանքները կատարելուց հետո, իսկ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման աշխատանքներն իրականացնել և ավարտին հասցնել համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 25-ի N 1079-Ն որոշման N 2 հավելվածի:

14. Ապահովել N 3 հավելվածի ցանկում ընդգրկված պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ծրագրավորված տնտեսական ցուցանիշների կատարումը, մասնավորապես, ապահովել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում շահույթի ծավալի շարունակական ավելացում:

15. Իրականացնել հսկողություն N 8 ցանկում ընդգրկված՝ մասնավորեցված, օտարված, նվիրաբերված, վարձակալությամբ, ինչպես նաև անհատույց օգտագործման իրավունքով տրված օբյեկտների գնորդների, նվիրառուների, վարձակալների և օգտագործողների կողմից ծրագրային ժամանակահատվածի ընթացքում ստանձնած ներդրումային պարտավորությունների նկատմամբ:

V. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ ԵՎ ՕՏԱՐՈՒՄԸ

16. Մասնավորեցման ծրագրում ընդգրկված և մինչև սույն ծրագիրն ուժի մեջ մտնելը չմասնավորեցված (չլուծարված) առևտրային կազմակերպությունների և այլ օբյեկտների մասնավորեցման կամ լուծարման առաջարկելու ժամկետները սահմանվում են սույն ծրագրով՝ համաձայն N 2 հավելվածի N 4 ցանկի:

17. Սույն ծրագրի N 2 հավելվածի N 4 ցանկում ընդգրկված առևտրային կազմակերպությունները և այլ օբյեկտներ մասնավորեցվում կամ լուծարվում են գործող օրենսդրությանը համապատասխան:

18. Մասնավորեցման ծրագրում չընդգրկված, օտարման առաջարկվող անշարժ գույքի և այն անշարժ գույքի, որի՝ պետությանը պատկանող գույքային իրավունքներն առաջարկվում է փոխանցել իրավաբանական ու ֆիզիկական անձանց, կազմը սահմանվում է՝ համաձայն N 2 հավելվածի N 5 ցանկի:

19. Սույն ծրագրի շրջանակներում օտարման ենթակա օբյեկտների շարքն են դասվում նաև մեկ մլրդ դրամից ավելի գնահատված արժեքով ներդրումային հավանական հետաքրքրություն ներկայացնելու նախկինում վաճառքի դրված և չվաճառված (մինչև մեկնարկային գնի 40 տոկոսով) անշարժ գույքը:

20. Սույն ծրագրի գործողության ժամանակահատվածում կոմիտեի կողմից անցկացված գույքի օգտագործման վիճակի ուսումնասիրության արդյունքում անշարժ գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ ներկայացված առաջարկությունների հիման վրա կարող է օտարման առաջարկվել N 5 ցանկում չներառված այլ անշարժ գույք:

21. Պետական գույքի վարձակալությունից ծրագրավորված մուտքերի ապահովումը ներկայացված է համաձայն N 2 հավելվածի N 6 ցանկի:

22. Պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման վարձավճարների սպասվելիք մուտքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է՝ համաձայն N 2 հավելվածի N 7 ցանկի:

VI. ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐԸ

23. Պետական և տարածքային կառավարման մարմիններն իրավունք չունեն սույն ծրագիրն ուժի մեջ մտնելուց հետո «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքի համաձայն մասնավորեցման ենթակա ոչ առևտրային կազմակերպությունների, պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների և պետական այլ գույքի նկատմամբ իրականացնելու այնպիսի գործառույթներ, որոնց արդյունքում անհնար կդառնա պետական գույքի նկատմամբ սույն ծրագրով սահմանված միջոցառումների իրականացումը: Մասնավորապես, պետական և տարածքային կառավարման մարմինները պարտավոր են սույն ծրագրում ընդգրկված ընկերություններին թույլ չտալ իրականացնել ոչ համարժեք կամ զեղչված գներով խոշոր գործարքներ, ընկերության գործունեության հետ չկապված ծախսեր (գործարքներ), մասնավորապես, բաժնետիրոջ

լիազորություններ իրականացնող պետական կառավարման մարմնի աշխատողների գործուղման, բարեգործական, ընկերության հիմնական գործունեությանը չառնչվող՝ սոցիալական ուղղվածություն ունեցող և այլ անհատույց գործարքներ:

24. Ծրագրում ընդգրկված պետական գույքի նկատմամբ այլ սահմանափակումներ կարող են սահմանվել սույն ծրագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով:

VII. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ՆԵՐԿԱՅՁՑՈՒՄԸ

25. 50 տոկոս և ավելի պետական սեփականությամբ բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների գործունեությանն առնչվող՝ սույն ծրագրով նախատեսված միջոցառումների կատարումն ապահովում են ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմինները:

26. «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 19-րդ հոդվածով սահմանված պահանջների համաձայն ծրագրով սահմանված նպատակների իրագործման և միջոցառումների իրականացման աստիճանը որոշելու նպատակով ծրագրի կատարման մասին մշակվում է տարեկան հաշվետվություն, որը ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվում մինչև հաջորդող տարվա մայիսի 1-ը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար**

Ա. Թորոսյան

01.04.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Ց Ա Ն Կ N 1

**ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԶԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ
 ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՎ
 (ԲԱԺՆԵՄԱՍԵՐՈՎ) ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

NN ը/կ	Առևտրային կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Հանրապետական գործադիր մարմնի անվանումը	Լուծարման վերաբերյալ առաջարկության հիմնավորումը
1.	«Պետական լոտո» փակ բաժնետիրական ընկերություն	բացակայում է	ՀՀ ֆինանսների նախարարություն	Ընկերության 50 տոկոս բաժնեմասի կառավարման լիազարությունը՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 27-ի N 1519-Ն որոշման 3-րդ կետի՝ վերապահվել է ՀՀ ֆինանսների նախարարությանը: Ընկերությունը պետք է կազմակերպեր Հայաստանի Հանրապետության տարածքում շահումով խաղային ապարատների կենտրոն-նական հաշվետու համակարգի և ազգային վիճակահանողի ներդրումը, սակայն մինչ օրս որևէ նպատակային գործունեություն չի իրականացրել, գործառնական եկամուտ չի ստացել: Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարող ենք եզրահանգել, որ ընկերության զարգացման հեռանկարային ծրագրերը բացակայում են, այդ իսկ պատճառով առաջիկայում նախատեսում ենք սկսել լուծարման գործընթաց:

Ց Ա Ն Կ N 2

**ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
 ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՎ (ԲԱԺՆԵՄԱՍԵՐՈՎ) ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

N N ը/ Կ	Առևտրային կազմակերպ ու-թյան անվանումը	Գտնվելու վայրը	Պետակա ն բաժնեմա սի մեծություն ը (%)	Հանրապե տական գործա-դիր մարմնի անվանումը	Վերակազմա կերպման առաջարկվող մոտեցումը	Վերակազմակե րպման նպատակը
1.	«Գյումրու ձևնդատուն» ՓԲԸ	քաղ. Գյումրի Կոշտոյան 3	100	Շիրակի մարզպետար ան	Վերակազմակերպմ ան միջոցով միավորել Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին:	օպտիմալացու մ
2.	«Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանո ց» ՊՓԲԸ	քաղ. Վանաձոր, Պ. Սևակի 51	100	Լոռու մարզպետար ան	Մտնում է «Վանա ձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կազմի մեջ՝ որպես առանձին բաժան մունք:	բնակչության բուժօգնության մատչելիություն ն, որակի բարձրացում
3.	«Վարդենիսի պոլիկլինիկա » ՊՓԲԸ	ՀՀ Գեղարքունի քի մարզ, քաղ. Վարդենիս, Ա. Սեսմանուկյ ան փողոց 6	100	ՀՀ Գեղարքունիք ի մարզպետար ան	«Վարդենիսի հիվանդանոց» և «Վարդենիսի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ները միաձուլման եղա նակով վերակազմակերպել ու «Վարդենիսի ԲԿ» ՓԲԸ-ի:	ազգաբնակչու թյանը մատուցվող հիվանդանոց ային ծառայություն ների որակն ու արդյունավետ ությունն ապահովելու անհրաժեշտ ություն

**ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԿՈՂ՝ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԿԱՄ ԸՍՏ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻՈՐԵՆ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ**

NN ը/կ	Անվանումը	Նախարարության, հանրապետական գործադիր մարմնի անվանումը	Հիմնավորումը
1.	քաղ. Երևան, Կոմիտաս 54բ հասցեում գտնվող շենքից տարածքը և չօգտագործվող շարժական գույքը	ՀՀ Ֆինանսների նախարարություն և	Նախատեսում ենք ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակից-ներին նշված շենքի տարածքից տեղափոխել քաղ. Երևան, Մելիք-Ադամյան 1 վարչական շենք և դրանից հետո ազատվող տարածքը և չօգտագործվող շարժական գույքը հանձնել ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեին: Նշված շենքից տարածքն անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով ամրացված է ՀՀ ֆինանս- ների նախարարությանը:
2.	քաղ. Երևան, Սարյան 22, 12-րդ հարկ հասցեում գտնվող տարածքը և չօգտագործվող շարժական գույքը	ՀՀ Ֆինանսների նախարարություն և	Կարիքի բացակայությամբ պայմանավորված՝ նշված տարածքը և շարժական գույքը չի օգտագործվում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից: Նշված տարածքն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված է ՀՀ ֆինանսների նախարարությանը:
3.	քաղ. Երևան, Կիևյան 2-րդ նրբ. թիվ 18 բնակելի տուն	ՀՀ Ֆինանսների նախարարություն և	Կարիքի բացակայությամբ պայմանավորված՝ նշված բնակելի տունը չի օգտագործվում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից: Նշված բնակելի տունը սեփականության իրավունքով ամրացված է ՀՀ ֆինանսների նախարարությանը:
4.	Առանձին տարածք Հիվանդանոցային 1/1/1 հասցեում (նախկին հիվանդանոցի շենք, քաղ, Ագարակում)	ՀՀ Սյունիքի մարզպետարան և	Պիտանի չէ շահագործման:

5.	Առանձին տարածք Մ. Օհանջանյան 4/1 հասցեում (նախկին պոլիկլինիկական շենք, քաղ. Մեղրի)	ՀՀ Սյունիքի մարզպետարան	Պիտանի չէ շահագործման:
6.	ՀՀ Սյունիքի մարզի գ. Արծևանիկի հիվանդանոցի շենք	ՀՀ Սյունիքի մարզպետարան	Հաշվառված է ՍՄՆՀԴ ՓԲԸ-ի հաշվեկշռում և չի օգտագործվում:
7.	ՀՀ Սյունիքի մարզի Լեռնաձոր համայնքի Քաջարանի ԲԿ-ի շենք	ՀՀ Սյունիքի մարզպետարան	Չի օգտագործվում, ՀՀ կառավարության 2006 թ. N 1911-Ն որոշում:
8.	«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ՝ Նիզամի 53/1՝ 3347.26մ2 , հող՝ 0.32094 հա Նիզամի 53/4՝ 220.08մ2 և 253.74 մ2, հող՝ 0.08765 հա	ՀՀ Լոռու մարզպետարան	Համաձայն ՀՀ կառավարության 10.10.2019 թ. N 1425-Ն որոշման՝ տեղափոխվել է նոր մասնաշենք՝ Նժդեհի 2/42 :
9.	«Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊԲԸ-ի հակասուրբերկ. ստացիոնար մասնաշենք, Նիզամի 53/3 0.56878 հա հողամաս՝ Նիզամի 53/3-1	ՀՀ Լոռու մարզպետարան	ՀՀ կառավարության 10.10.2019 թ. N 1425-Ն որոշում ՀՀ կառավարության 07.05.2020 թ. N 702-Ն որոշում
10.	«Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ-ի նախկին շենքը, Բանակի 8գ-1	ՀՀ Լոռու մարզպետարան	Համաձայն ՀՀ կառավարության 10.10.2019 թ. N 1425-Ն որոշման տեղափոխվել է «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նոր մասնաշենք, Նժդեհի 2/42:

Ց Ա Ն Կ Ն 4

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՉՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ (ՉԼՈՒԾԱՐԿԱԾ) ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԼՈՒԾԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ

N N	Մասնավորեցման ծրագրում	Ծածկագիրը՝	Հանրապետական գործադիր	Առաջարկության	Առաջարկվող ժամկետը
-----	------------------------	------------	-----------------------	---------------	--------------------

ը/կ	ընդգրկված ընկերության (օբյեկտի) անվանումը	ըստ մասնավորեցման ծրագրի	մարմնի անվանումները	բովանդակությունը (մասնավորեցնել կամ լուծարել)	(տարի)
1	2	3	4	5	6
1.	«Արտակարգ իրավիճակների օդանավակայան» ՓԲԸ (100 % պետական բաժնեմաս)	90119	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	մասնավորեցում կամ լուծարում	2021-2023 թթ.
2.	«Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ (100 % պետական բաժնեմաս)	90108	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում	2021-2023 թթ.
3.	«Հանրապետական անձավաբուժական կենտրոն» ՓԲԸ (100 % պետական բաժնեմաս)	90115	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում կամ լուծարում	2021-2023 թթ.
4.	«Նևրոզների կլինիկա» ՓԲԸ (100 % պետական բաժնեմաս)	90114	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում կամ լուծարում	2021-2023 թթ.
5.	«Ռադիոհիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ (100 % պետական բաժնեմաս)	90075	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում	2021-2023 թթ.
6.	«Ավտոմատիկա» ՓԲԸ (80 % պետական բաժնեմաս)	90074	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում կամ լուծարում	2021-2023 թթ.
7.	«Երևանի ջրամատակարարման ուղեմաս» ԲԲԸ (100 % պետական բաժնեմաս)	60347	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում	2021-2023 թթ.
8.	«Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ (80 % պետական բաժնեմաս)	21876	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում կամ լուծարում	2021-2023 թթ.
9.	«Ընդերքաբանի կոլեկտիվ»	62130	ՀՀ ՏԿԵՆ պետական	մասնավորեցում կամ	2021-2023 թթ.

	տեղամաս» ՓԲԸ (100 % պետական բաժնեմաս)		գույքի կառավարման կոմիտե	լուծարում	
10	«Ընդերքաբանի Արեգի տեղամաս» ՓԲԸ (100 % պետական բաժնեմաս)	62130	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում	2021-2023 թթ.
11	«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ (100 % պետական բաժնեմաս)	90102	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում	2021-2023 թթ.
12	«Հ. Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա» ՓԲԸ (100 % պետական բաժնեմաս)	90103	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում	2021-2023 թթ.
13	«Հրազդանի մարզահամալիր» ՓԲԸ (100 % պետական բաժնեմաս)	90051	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում կամ լուծարում	2021-2023 թթ.
14	«Ձիասպորտի կենտրոն» ՓԲԸ (100 % պետական բաժնեմաս)	90057	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում կամ լուծարում	2021-2023 թթ.
15	«Ագրոսպասարկում» ԱՄ-ի Ախուրյանի շրջ. միավորում» ԲԲԸ (34 % պետական բաժնեմաս)	61110	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում կամ լուծարման առաջարկություն	2021-2023 թթ.
16	«Ագրոսպասարկում» ԱՄ-ի Իջևանի շրջ. միավորում» ԲԲԸ (34 % պետական բաժնեմաս)	62308	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում կամ լուծարման առաջարկություն	2021-2023 թթ.
17	«Ագրոսպասարկում» ԱՄ-ի Անիի շրջ. միավորում» ԲԲԸ (34 % պետական բաժնեմաս)	61100	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում կամ լուծարման առաջարկություն	2021-2023 թթ.
18	«Բերրիություն» ԱՄ-ի Վարդենիսի շրջ. միավորում» ԲԲԸ (34 % պետական բաժնեմաս)	61103	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում կամ լուծարման առաջարկություն	2021-2023 թթ.
19	«Դվին կոնցեռն» ՓԲԸ (38.4% պետական բաժնեմաս)	21843	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի	մասնավորեցում կամ լուծարման	2021-2023 թթ.

			կառավարման կոմիտե	առաջարկություն	
20	«Սևակ և Սաթինե» ՍՊԸ (24 % պետական բաժնեմաս)	90104	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում կամ լուծարման առաջարկություն	2021-2023 թթ.
21	«Ճաղկածորի գլխավոր մարզահամալիր» ՓԲԸ (100 % պետական բաժնեմաս)	90120	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում	2021-2023 թթ.
22	«Հավաքական թիմերի մարզական կենտրոն» ՓԲԸ (100 % պետական բաժնեմաս)	90121	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	մասնավորեցում	2021-2023 թթ.

Ց Ա Ն Կ Ն 5

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԸՆԴԳՐԿՎԱԾ, ՕՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ, ՈՐԻ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՒԹՅԱՆ Ե ՓՈԽԱՆՑԵԼ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

NN ը/կ	Գույքի անվանումը	Գտնվելու վայրը	Մակերեսը (քառ. մետր)	Հանրապետական գործադիր մարմնի անվանումը	Գույքային իրավունքների գրանցված լինելու հանգամանքը	Հաշվեկշռում ամրագրված լինելու հանգամանքը
1	2	3	4	5	6	7
1.	Տարածք	ք. Երևան, Լոր Լորք, Մուղղական փող., 29/4 շենք, 1/5	36.2	Պետական գույքի կառավարման կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
2	Տարածք	ք. Երևան, Լոր Լորք, Մուղղական փող., 29/5 շենք,	50.1	Պետական գույքի կառավարման	Գրանցված է:	Հաշվառված է:

		1/8		կոմիտե		
3.	Տարածք	ք. Երևան, Լոր Լորք, Մուլրովական փող., 29/5 շենք, 1/9	67.9	Պետական գույքի կառավարմ ան կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
4.	Երկաթուղու արտադրակ ան համալիր	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան, Օղակաձև փ., թիվ 4/2	707.85 85.0 7.7	Պետական գույքի կառավարմ ան կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
5.	Բենզինի պահեստ	ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սանահին կայարան	45.2	Պետական գույքի կառավարմ ան կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
6.	Շենք	ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, Գրիբոյեդովի թաղամաս 4	281.9	Պետական գույքի կառավարմ ան կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
7.	Վարչական շենք Ավտոտնակ	ք. Ապարան, Գայի փողոց	413.44	Պետական գույքի կառավարմ ան կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
8.	Շենք շինություննե ր	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Պետրոս Դուրյան փողոց	618.67 49.5	Պետական գույքի կառավարմ ան կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
9.	Վարչական շենք	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Ռոմանի փողոց թիվ 98/1	250.1	Պետական գույքի կառավարմ ան կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
10.	Աշտարակի Նախկին բժշկական կենտրոնի հիմնական մասնաշենք	ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Նարեկացու փողոց	1793.3	Պետական գույքի կառավարմ ան կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
11.	Նախկին հիվանդանոց ի շենք	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ համայնք, Տիգրան Մեծի փողոց 17/3	2120.9	Պետական գույքի կառավարմ ան կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
12.	Բացվածք (տարածք)	ՀՀ Սյունիքի մարզ, ք.	233.1 22.2	Պետական գույքի	Գրանցված է:	Հաշվառված է:

		Ագարակ, Սայաթ-Նովա 7/3	/ընդհ. Օգո. Տարած ք/	կառավարմ ան կոմիտե		
13.	Ոչ բնակելի տարածք	ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս 3/9-55	32.4	Պետական գույքի կառավարմ ան կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
14.	Տարածք	ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս 3/10- 51	307.8	Պետական գույքի կառավարմ ան կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
15.	Ավերակ	ՀՀ Արագածոտնի մարզ, Վարդենուտ համայնք, 1 փողոց, 31/2	354.44	Պետական գույքի կառավարմ ան կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
16.	Ռեստորանի շենք	ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Ջերմուկ	975	Պետական գույքի կառավարմ ան կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
17.	Վարչական շենք	ՀՀ Արմավիրի մարզ, համայնք Չարթունք, 4-րդ փողոց 57	753.74	Պետական գույքի կառավարմ ան կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
18.	Ամբուլատոր իա	ՀՀ ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սանահին կայարան	133.0	Պետական գույքի կառավարմ ան կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
19.	Ոչ բնակելի տարածք	ք. Երևան, Ե. Քոչարի 5 շ., 69 շինություն	115.1	Պետական գույքի կառավարմ ան կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
20.	Նախկին փոր- ձագիտական մասնաշենք	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, 6- րդ թաղամաս, 4- րդ փ., թիվ 2 շինություն	351.6	Պետական գույքի կառավարմ ան կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
21.	Նախկին մանրէների անվանադրմ ան կենտրոն	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Արզնի խճ.	7 451.05	Պետական գույքի կառավարմ ան կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:

22.	Նախկին ծննդատան շենք	ՀՀ Արաշատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի փ. 23	7 179.9	Պետական գույքի կառավարման կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
23.	Քուլեջի շենք, շինություններ	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գորկու փ., թ. 3	1 865.28	Պետական գույքի կառավարման կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
24.	Հրշեջ կայան	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ձիվանու փ., թիվ 64	1 330.78	Պետական գույքի կառավարման կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
25.	Կաթսայատուն, ավտոտնակ	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ձիվանու փ., թիվ 64/1	125.11	Պետական գույքի կառավարման կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
26.	Հատուկ լեռնափրկարար ծառայության նախկին տարածք	ք. Երևան, Գ. Գյուլբենկյան փ., թիվ 29 շ., հ 25	1 050.9	Պետական գույքի կառավարման կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
27.	Դպրոցի շենք, շինություններ	ՀՀ Արմավիրի մարզ, Այգեկ համայնք	725.7	Պետական գույքի կառավարման կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
28.	Հողամաս	ք. Երևան, Հրազդանի կիրճ, խճ. 2/3	0.0416 32 հա հողամաս	Պետական գույքի կառավարման կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
29.	Շենք, շինություններ	ք. Երևան, Հրազդանի կիրճ, խճ. 2/4	741.5	Պետական գույքի կառավարման կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
30.	Հիվանդանոցի շենք, շինություններ	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Ագարակ, Հիվանդանոցային փ., 1/1/2	1581.6	Պետական գույքի կառավարման կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
31.	Հիվանդանոցի շենք, շինություններ	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Ագարակ, Հիվանդանոցային փ., 1/2	637.4	Պետական գույքի կառավարման կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:

32.	Պոլիկլինիկայի շենքի մի հատված	ք. Երևան, Ազատամարտիկների պողոտա, 82/2 շենք 1 շինություն	1 174.8	Պետական գույքի կառավարման կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
33.	Ոչ բնակելի տարածք (կիսանկող)	ք. Երևան, Մաշտոցի պ., 9 շ., թիվ 32	128	Պետական գույքի կառավարման կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
34.	Շենք շինություններ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Գ. Գագարին, Գործարանային փ. 4	1 008.51	Պետական գույքի կառավարման կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
35.	«Լուսանշան» ՊՈԱԿ-ի նախկին գրասենյակ	ք. Երևան, Սեբաստիայի փող, թիվ 7	135.9	Պետական գույքի կառավարման կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
36.	Հիվանդանոցի նախկին ծննդատան շենք	ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Շահումյան 2	2 099.4	Պետական գույքի կառավարման կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
37.	Ոստիկանության նախկին տարածք	ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնք, Ջրառատ թաղամաս	5392.78	Պետական գույքի կառավարման կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:
38.	Շենք, շինություններ	ք. Երևան, Նորք Մարաշ, Նորքի այգիներ 180	2018.12	Պետական գույքի կառավարման կոմիտե	Գրանցված է:	Հաշվառված է:

Ց Ա Ն Կ Ն 6

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՊԱՎԵԼԻՔ ՍՈՒՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N N ը/ կ	Իրավական ակտը, որով կանոնակարգվում է վարձակալության գործընթացը	Պետական բյուջե սպասվելիք դրամական մուտքերը (հազ. դրամ)		
		2021 թ.	2022 թ.	2023 թ.
1.	ՀՀ կառավարության 04.06.2020 թ.-ի «Պետական գույքի վարձակալության տրամադրման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 9-ի N 731, 2001	170,000. 0	158,000. 0	130,000. 0

<p>թվականի փետրվարի 22-ի N 125 և 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1106-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 914-Ն որոշում</p>			
---	--	--	--

* Աղյուսակի կանխատեսումները վկայում են այն մասին, որ վարձակալությունից սպասվելիք մուտքերը նվազում են, պատճառը՝ վարձակալությամբ տրված գույքի օտարման գործընթացի իրականացումն է:

Ց Ա Ն Կ N 7

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՈՒ ՁԵՂՆԱՀԱՐԿԵՐՈՒՄ ԿԱՊԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՍՊԱՍԿԵԼԻՔ ՄՈՒՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N ը/ կ		Սպասվելիք դրամական մուտքերը, (հազ. դրամ)		
		2021 թ.	2022 թ.	2023 թ.
1.	Շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման վարձավճարի մուտքեր, ընդամենը, այդ թվում՝	259,000. 0	271,000. 0	279,000. 0
2.	Պետական բյուջե սպասվելիք դրամական մուտքերը	73,000.0	76,000.0	79,000.0
3.	ՊՈՂԿ-ներ	186,000. 0	195,000. 0	200,000. 0

Ց Ա Ն Կ Ո Ց

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ, ՕՏԱՐՎԱԾ, ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒԼՔՈՎ ՏՐՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՆՈՐԴՆԵՐԻ, ՆՎԻՐԱՌՈՒՆԵՐԻ, ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԻ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ (2021-2023 ԹԹ.) ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՏԱՆՁՆԱԾ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

N /Կ	Պայմանագրի տեսակը և համարը	Մասնավորեցված և օտարված, ինչպես նաև անհատույց օգտագործման իրավունքով տրված օբյեկտների անվանումները	Ծրագիրն իրականացնողը	2021-2023 թթ. ընթացքում ներդրումների և այլ ծրագրերի իրականացման կանխատեսումները	Կանխատեսումները՝ ըստ տարիների		
					2021 թ.	2022 թ.	2023 թ.
					կանխատեսված		
Մասնավորեցված օբյեկտների գնորդների կողմից ստանձնած պարտավորությունները							
1.	865-ՈԼ	Երևան Բագրատունյաց 73	«Նեյտրոն ԳԱՄ» ՓԲԸ	3 400 000 000 դրամ և 180 նոր աշխատատեղ ամսական միջին աշխատավարձը դարձնելով 80 000 դրամ	3 400 000 000 դրամ և 180 նոր աշխատատեղ ամսական միջին աշխատավարձը դարձնելով 80 000 դրամ	Պարտավորություններ նախատեսված չեն:	Պարտավորություններ նախատեսված չեն:
2.	225-Մ	Քաղաք Հրազդան, Սպանդարյան փողոց	«Հրազդան» կինոթատրոն	պրոֆիլի պահպանում	պրոֆիլի պահպանում	պրոֆիլի պահպանում	պրոֆիլի պահպանում
3.	857-ՈԻ	Քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս	«Բարեկամություն» կինոթատրոն	պրոֆիլի պահպանում	պրոֆիլի պահպանում	պրոֆիլի պահպանում	պրոֆիլի պահպանում
4.	435-ՈԼ	Երևան քաղաքի Խանջյան 19	«Լեռնամետալուր»	պրոֆիլի պահպանում	պրոֆիլի պահպանում	պրոֆիլի պահպանում	պրոֆիլի պահպանում

			գիայի ինստիտուտ»				
Օտարված օբյեկտների գնորդների կողմից ստանձնած ներդրումային պարտավորությունները							
5.	824-Օ	Երևան քաղաքի, Նորք Մարաշ վարչական շրջան, Գ. Հովսեփյան 32/6 հասցե	«Հին Նորք բիզնես կենտրոն» ՓԲԸ	2019 թվականից ստանձնել է 3 000 000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ և 1000 աշխատատեղի ստեղծման պարտավորություն	1 000 000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ և 1000 աշխատատեղ	Պարտավորությ ուններ Նախատեսված չեն:	Պարտավորությո ւներ Նախատեսված չեն:
6.	841-Օ	Երևան քաղաքի Սասունցի Դավթի փողոց, թիվ 66/1 հասցե	Արմեն Գևորգյան	45 000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ի ներդրում	45 000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ	Պարտավորությ ուններ Նախատեսված չեն:	Պարտավորությո ւներ Նախատեսված չեն:
7.	875-Օ	Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Լենինականի փողոց, թիվ 3 հասցե	«Օֆիս Բեյր» ՍՊԸ	215 000 000 դրամ և 5 աշխատատեղի ստեղծման պարտավորություն	13 437 500 դրամ	67 187 500 դրամ	67 187 500 դրամ
8.	869-Օ	Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանի Նար-Դոսի փողոց, թիվ 53/2 հասցե	«Ատլանտ Գրուպ» ՍՊԸ	1 440 000 000 դրամի ներդրում	1 440 000 000 դրամ	Պարտավորությ ուններ Նախատեսված չեն:	Պարտավորությո ւներ Նախատեսված չեն:
